Նոտարական ակտի կոդ: 793-20250905-79-9363634
Նոտարական ակտի գաղտնագիր: C7EP61

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան
05/09/2025 թ., Երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի հինգին

Ես՝ ՆԱՐԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆՍ, ծնված՝ 31/08/1967թ-ին, ՀԾՀ՝ 8108670039, անձնագիր՝ AX0387145, տրված՝ 019-ի կողմից, 25/07/2024թ-ին, հաշվառված՝ ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, ԱԲՈՎՅԱՆ, 1 Փ.,. 39 S հասցեում, **ԼԻԱԶՈՐՈՒՄ ԵՄ ՍԱՄՍՈՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**, ծնված՝ 22/06/1961թ-ին, ՀԾՀ՝ 3214610325, նույնականացման քարտ՝ 018174474, տրված՝ 046-ի կողմից, 15/06/2025թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 3 ԹՂՄ., 94/1 S հասցեում, **լինել իմ ներկայացուցիչը և իմ փոխարեն իրականացնել՝ Մարզ Գեղարքունիք, համայնք Շողակաթ, գյուղ Արտանիշ 2-րդ (երկրորդ) փողոց 1 (մեկ) շենք հասցեում գտնվող անշարժ գույքի** կոմունալ, սպասարկման և այլ տեսակի վճարումները, ինչպես նաև կնքել, ստորագրել, փոփոխել, ըստ անհրաժեշտության լուծել նշված հասցեի կոմունալ և սպասարկման ծառայությունների համապատասխան պայմանագրերը:
Նշված լիազորության հետ կապված՝ ներկայացուցիչն իրավունք ունի իմ փոխարեն հանդես գալ, ներկայացնել և պաշտպանել իմ շահերը Հայաստանի Հանրապետության պետական, վարչական և ոչ պետական մարմիններում, հիմնարկներում, կազմակերպություններում, ընկերություններում, այդ թվում՝ առանց բացառության ՀՀ բոլոր նախարարություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, քաղաքապետարանում, մարզպետարանում, վարչական շրջանի կամ համայնքի ղեկավարի աշխատակազմում, անշարժ գույքի կադաստրի կոմիտեում, վերջինիս սպասարկման գրասենյակներում, «ՀԱՅՓՈՍՏ» ընկերությունում, բանկերում, դրանց համապատասխան մասնաճյուղերում, բաժանմունքներում, կապի (ֆիքսված, շարժական, համացանցային) և կոմունալ (էլեկտրաէներգիայի, ջրի, գազի և այլն) ծառայություններ մատուցող ընկերություններում, նշվածների համապատասխան մասնաճյուղերում և տեղամասային գրասենյակներում, գազի ներտնային սպասարկման ծառայություն իրականացնող այլ ընկերություններում, համատիրությունում, համապատասխանաբար ներկայացնել, ձևակերպել և/կամ ստանալ դիմումներ, թույլտվություններ, անդորրագրեր, կտրոններ, ցանկացած այլ փաստաթղթեր, կատարել ցանկացած վճարումներ (պետական, հարկային, կոմունալ, սպասարկման, ինչպես նաև այլ տուրքեր ու վճարներ), կոմունալ և/կամ այլ տեսակի ծառայությունների բաժանորդ կամ սպառող դառնալու նպատակով կնքել, վերակնքել համապատասխան պայմանագրեր, լուծել, լրացնել կամ փոփոխել նշված պայմանագրերը, իմ անունից անել հայտարարություններ, տալ համաձայնություններ, ինչպես նաև դիմել և ինձ պատկանող վերը նշված անշարժ գույքի հասցեում սահմանված կարգով իր հայեցողությամբ անցկացնել, ավելացնել, փակել կամ տեղափոխել գազի սնուցման կետ(եր), անցկացնել խմելու ջրի մատակարարման և/կամ կեղտաջրերի հեռացման խողովակներ, տեղադրել հաշվիչներ, այլ համապատասխան սարքավորանք, կազմակերպել, իրականացնել դրա(նց) հետ կապված ցանկացած գործողությունները, այդ թվում, անհրաժեշտության դեպքում՝ շինարարական կամ քանդման աշխատանքները, ստորագրել իմ փոխարեն, ինչպես նաև կատարել այն բոլոր գործողությունները, որոնք կապված են սույն լիազորության իրականացման հետ:
Լիազորողս հավաստում եմ, որ գործունակության մեջ սահմանափակված չեմ, իմ նկատմամբ չկա սահմանված խնամակալություն, հոգաբարձություն կամ պատրոնաժ և, որ սույն լիազորությունն իմ կողմից տրվում է կամավոր:
Լիազորագրի էությունը, իմաստն ու նշանակությունը, իմ իրավունքներն ու պարտականությունները նոտարի կողմից պարզաբանվել են ինձ, ինչպես նաև նոտարի կողմից զգուշացվել եմ լիազորագրի կատարման հետևանքների մասին, որոնք պարզ են ու հասկանալի, համապատասխանում են իմ իրական մտադրություններին:
Լիազորագիրը տրվում է 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի:

ԼԻԱԶՈՐՈՂ՝

Նարինե Սերյոժայի Սարգսյան

Երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի հինգին, սույն լիազորագիրը վավերացված է իմ՝ **ՀՀ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ»** նոտարական տարածքի նոտար **ԱՎԵՏԻՔ ՍԱՐԳՍԻ ՊԱՊԻՆՅԱՆԻՍ** կողմից: Լիազորագիրը ստորագրված է **ՆԱՐԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ** կողմից՝ իմ ներկայությամբ: Նրա ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ 2537-ով:

Գանձված է պետական տուրք երեք հազար ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հազար ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20% ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ավետիք Սարգսի Պապինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՏԱՐԻԱՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՏԱՐԻՈՒՍ ԱՎԵՏԻՔ ՍԱՐԳՍԻ ՊԱՊԻՆՅԱՆ
РА НОТАРИАЛЬНАЯ ТЕРРИТОРИЯ "КОТАЙКСКИЙ МАРЗ" НОТАРИУС АВЕТИК САРГСОВИЧ ПАПИНЯН
RA "KOTAYK MARZ" NOTARIAL TERRITORY NOTARY PAPINYAN AVETIK SARGSI
80473962